***Պատմության օլիմպիադայի դպրոցական փուլ (2024-2025 ուստարի)***

**10-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)**

1. Ե՞րբ է Կարինում հիմնվել Սանասարյան վարժարանը.
   1/ 1857 թ. 2/ 1885 թ. 3/ 1874 թ. 4/ 1881 թ.
2. Ո՞վ է սկզբնական շրջանում գլխավորել 774-775 թթ. հակաարաբական ապստամբությունը.
   1/ Արտավազդ Մամիկոնյան 2/ Դավիթ Մամիկոնյան
   3/ Աշոտ Բագրատունի 4/ Սմբատ Բագրատունի
3. Որտե՞ղ է գործել «Միություն ի փրկություն» գաղտնի կազմակերպությունը.
   1/ Վան 2/ Մոսկվա 3/ Ալեքսանդրապոլ 4/ Կարին
4. Ո՞վ է եղել Հայաստանի առաջին հանրապետության երկրորդ վարչապետը.
   1/ Ալ. Խատիսյան 2/ Ս. Վրացյան 3/ Հ. Օհանջանյան 4/ Հ. Քաջազնունի
5. Ո՞ր թվականին է տեղի ունեցել Ճարմանայի ճակատամարտը.
   1/ 481 թ. 2/ 450 թ. 3/ 482 թ. 4/ 484 թ.
6. Քանի՞ տարի է գոյություն ունեցել Բագրատունյաց թագավորությունը.
   1/ 140 2/ 180 3/ 160 4/ 200
7. Ո՞ր զորավարությունն էր ղեկավարում Արտաշես Ի-ի որդի Արտավազդը.
   1/ հյուսիսային 2/ արևելյան 3/ հարավային 4/ արևմտյան
8. Ե՞րբ է տեղի ունեցել Հռանդեայի ճակատամարտը.
   1/ 58 թ. 2/ 296 թ. 3/ 62 թ. 4/ Ք. ա. 68 թ.
9. Ե՞րբ է հիմնադրվել Դելիի սուլթանությունը.
   1/ 1206 թ. 2/ 1299 թ. 3/ 1398 թ. 4/ 1254 թ.
10. Ո՞ր երրորդ դարում է հիմնվել Սելևկյան պետությունը.
    1/ Ք. ա. 4-րդ 2/ Ք.ա. 3-րդ 3/ Ք.ա. 5-րդ 4/ Ք.ա. 6-րդ
11. Ո՞վ է գլխավորել 1911-1912 թթ. Չինական հեղափոխությունը.
    1/ Պու Ի 2/ Սուն Յաթսեն 3/ Չան Կայշի 4/ Ու Դի
12. Որքա՞ն էր կազմում Երկրորդ աշխարհամարտում տերությունների մարդկային զոհերի թվաքանակը.
    1/ մոտ 10 մլն 2/ մոտ 100 մլն 3/ մոտ 50 մլն 4/ մոտ 25 մլն
13. Ո՞վ է «Ձեր ոչխարները խժռում են մարդկանց» արտահայտության հեղինակը.
    1/ Թոմաս Մոր 2/ Ալբրեխտ Դյուրեր 3/ Էրազմ Ռոտերդամցի 4/ Պիտեր Բրյոգել Ավագ
14. Ընտրե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ տարբերակը:
    ա/ Հեթում Ի-ի գահակալության սկիզբը
    բ/ Լևոն II-ի գահակալման ավարտը
    գ/ Կիլիկիայում իշխանության անցումը Լուսինյաններին
    դ/ Մլեհի կառավարման ավարտը
    ե/ Հեթում Ի-ի և Մանգուի միջև պայմանագրի կնքումը

    1/ դ, բ, ա, ե, գ 2/ դ, բ, ա, գ, ե 3/ բ, դ, ա, ե, գ 4/ դ, բ, գ, ա, ե
15. Ընտրե՛ք ճիշտ զույգերով տարբերակը:

| | |
|---|---|
| 1. Արտեմ Ալիխանյան | ա/ երկրաքիմիա |
| 2. Անդրեաս Արծրունի | բ/ մաթեմատիկա |
| 3. Աշոտ Հովհաննիսյան | գ/ լեզվաբանություն |
| 4. Արտաշես Շահինյան | դ/ ֆիզկիա |
| 5. Հրաչյա Աճառյան | ե/ պատմություն |

    1/ 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-գ 2/ 1-դ, 2-գ, 3-ե, 4-բ, 5-ա
    3/ 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-գ 4/ 1-դ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-գ
16. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները:
    1/ Անդրանիկը իր զենքերը 1919 թ. գարնանը հանձնել է կաթողիկոսին և հեռացել Հայաստանից:
    2/ «Վարդան Զորավար» զրահագնացքի կապիտան Սարգիս Մուսաելյանը ղեկավարել է Մայիսյան ապստամբությունը:
    3/ 1918 թ. դեկտեմբերի 31-ին կնքվել է հայ-վրացական հաշտության պայմանագիր:

4/ Փարիզի խորհրդաժողովին մասնակցում էին հայկական երկու պատվիրակություններ Ալեքսանդր Խատիսյանի և Պողոս Նուբար փաշայի ղեկավարությամբ:
5/ 1920 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում ստորագրված պայմանագրով Ֆրանսիան Կիլիկիան վերջնականապես հանձնել է Թուրքիային:
6/ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում թուրքական բանակը համառ գրոհներից հետո չի կարողացել գրավել Ալեքսանդրապոլը:

17. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները:

1/ Հին Հռոմում պետության ընթացիկ գործերը վարում էր Սենատը:
2/ Պատրիկների իրավունքները սահմանափակ էին և չէին կարող պետական պաշտոններ զբաղեցնել:
3/ Հին Հռոմում կառավարությունը գլխավորում էին երկու կոնսուլները:
4/ Պլեյբեյները Հռոմի լիիրավ քաղաքացիներ էին և հավակնում էին բարձր պետական պաշտոնների:
5/ Վաղ հռոմեական հանրապետությունում ավագանին երբեք չի գերիշխել:
6/ Հին Հռոմում Ծերակույտը հավաքվում էր տարին մեկ անգամ:

18. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք սխալ պնդումները:

1/ Խորհրդային իշխանության առաջին ամիսներին ձերբակալվեցին ՀՀ նշանավոր գործիչները Հ. Օհանջանյանը, Ստ. Շահումյանը և ուրիշներ:
2/ Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահն էր Սիմոն Վրացյանը:
3/ 1921 թ. ստեղծվել է ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը, որի նախագահ է նշանակվել Ալեքսանդր Միասնիկյանը:
4/ 1922 թ. դեկտեմբերի 30-ին ձևավորված ԽՍՀՄ կազմում կային 4 պետություններ:
5/ Հայաստանում նէպին անցումը կատարվել է աստիճանաբար, որի առանցքում էր պարենհարկի կիրառումը:
6/ 1939 թ. Հայաստանի տնտեսությունը հասել է 1913 թ. մակարդակին:

19. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները:

1/ 1989 թ. մայիսի 25-ին Երևանում իր աշխատանքներն է սկսել ՀԽՍՀ Ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը:
2/ 1989 թ. հունվարին Երևանում ստեղծվել է Հատուկ կառավարման կոմիտե՝ Արկադի Վոլսկու ղեկավարությամբ:
3/ 1990 թ. օգոստոսի 23-ի հռչակագրով «հռչակվում էր Հայաստանի Երրորդ Հանրապետությունը»:
4/ 1991 թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա Աթայում հավաքված բոլոր խորհրդային հանրապետությունների ղեկավարները (բացառությամբ Մերձբալթյան երկրների) ստորագրել են համաձայնագիր ԱՊՀ ստեղծման մասին:
5/ 1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելոռուսիայի Բելովեժյան անտառ-արգելոցում հավաքվել են Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելոռուսիայի արտաքին գործերի նախարարները և ստորագրել ԽՍՀՄ գոյությունը դադարեցնելու համաձայնագիր:
6/ 1991 թ. դեկտեմբերի 25-ին Ա. Գորբաչովը հրաժարական է տվել ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահի պաշտոնից:
7/ 1990 թ. օգոստոսի 24-ին ՀՀ պետական դրոշը հաստատվել է եռագույնը:
8/ Հայաստանի երրորդ հանրապետության Սահմանադրությունն ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով:
9/ 1999 թ. ձևավորվել է ՀՀ եռաստիճան դատական համակարգը:

20. Պահպանելով տրված հաջորդականությունը՝ տարբերակներից ընտրե՛ք սխալ պնդումները:

1/ 89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատարն էր Նելսոն Ստեփանյանը:
2/ Հովհաննես Իսակովը ԽՍՀՄ նավատորմի ծովակալ էր և ԽՍՀՄ հերոս:
3/ ԽՍՀՄ մարշալ Հովհաննես Բաղրամյանին և օդաչու Նվեր Սաֆարյանին շնորհվել է Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում:
4/ Բուլղարիայի պարտիզանական պայքարի հերոսներից էր Հերմինե Ռազգրադյանը (Ռազկրատյանը):

5/ Էռնեստ Դերվիշյանը Երկրորդ աշխարհամարտին իր մասնակցության համար արժանացել է ԱՄՆ բարձրագույն պետական պարգևի:
6/ 1943 թ. Երևանում բացվել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը՝ Արմֆանը:
7/ Խորհրդային շրջանի քանդակագործ Արա Սարգսյանի գործերից է «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» քանդակը:
8/ 1920-ական թթ. նկարահանված «Նամուս» ֆիլմը առաջին համր կինոնկարն է:
9/ Քիմիական արդյունաբերության զարգացման բնագավառում մեծ ներդրում են ունեցել Լևոն Ռոտինյանը և Ստեփան Ղամբարյանը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

14.01.2025 թ.